ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0019 Երևան, Մ. Բաղրամյան 19, հեռ. (+374 11) 888-107, 888-146, էլ. հասցե՝ intrel@armsai.am

№ ԽՄԵ-63 «15» 02 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Ի կատարումն Ձեր 24.12.2018թ.
N 05/05.15/43500-18 գրության

Հարգելի պարոն Գրիգորյան

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2018թ. սեպտեմբերի 14-ի թիվ 26 կարգադրությամբ հավանություն է տրվել «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) նախագծին և այն ուղարկվել է ԵԱՏՄ անդամ պետություններ՝ Համաձայնագրի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու համար:

Ձեր 24.12.2018թ. թիվ 05/05.15/43500-18 գրությամբ ՀՀ հաշվեքննիչ պալատին առաջարկվել է ապահովել Համաձայնագրի նախագծի հետագա ընթացքը՝ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ իրավասու մարմինը Կառավարություն է ներկայացնում միջազգային պայմանագրի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին կառավարության որոշման նախագիծ:

ՀՀ կառավարության 08.06.2018թ. թիվ 667-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգի 13-րդ կետի համաձայն՝ կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարները

012.2/10223
18 02 19թ

կարող են իրավական ակտերի նախագծեր առաջարկել վարչապետին, իսկ այլ պետական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ կառավարության համապատասխան անդամին:

Ելնելով վերոգրյալից՝ ներկայացնում ենք «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը և խնդրում ենք Ձեր համապատասխան հանձնարարականը՝ Համաձայնագրի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծին օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար:

Առդիր՝ 27 էջ:

Հարգանքով

Լ. ՅՈԼՅԱՆ

Կատարող՝ Է. Սուքիասյան
Հեռ. 011-888-159

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

14 սեպտեմբերի 2018 թվականի **թիվ 26** քաղ. Մոսկվա

«Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրի նախագծի վերաբերյալ

1. Հավանություն տալ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրի նախագծին (կցվում է) եւ այն ուղարկել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ՝ ներպետական ընթացակարգեր անցկացնելու համար:

2. Դիմել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ սույն կարգադրության 1-ին կետում նշված Համաձայնագրի ստորագրման համար

անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին մինչեւ 2018 թվականի նոյեմբերի 30-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնելու խնդրանքով:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Մ. Գրիգորյան	**Ի. Պետրիշենկո**	**Ա. Մամին**	**Ժ. Ռազակով**	**Ա. Սիլուանով**

Նախագիծ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝ անդամ պետություններ,

«Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հավելված) (այսուհետ՝ Արձանագրություն) 53-րդ կետի իրագործման նպատակներով,

ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով, միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով եւ նորմերով,

ելնելով ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) (այսուհետ՝ ներմուծման մաքսատուրքեր) գումարները որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ ամբողջական ու ժամանակին մուտքագրումն ապահովելու անհրաժեշտությունից,

հայտարարելով փոխշահավետ համագործակցության պահպանման վերաբերյալ իրենց մտադրության մասին,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Ընդհանուր դրույթներ

1. Անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Արձանագրության դրույթների պահպանման ստուգումն իրականացվում է յուրաքանչյուր տարի՝ անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների կողմից համատեղ վերահսկիչ միջոցառումների շրջանակներում:

2. Անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Արձանագրության դրույթների պահպանմանն ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների կազմակերպման եւ անցկացման ժամանակ անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինները ղեկավարվում են սույն Համաձայնագրով, ինչպես նաեւ անդամ պետությունների օրենսդրությամբ:

3. Համատեղ վերահսկիչ միջոցառումների աշխատանքային լեզուն ռուսերենն է:

Համատեղ վերահսկիչ միջոցառումների շրջանակներում տեղեկատվությունն ու փաստաթղթերը ներկայացվում են ռուսերենով կամ անդամ պետության պետական լեզվով (կցելով դրանց ռուսերեն թարգմանությունը):

4. Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացությունները կիրառվում են Արձանագրությամբ սահմանված իմաստներով:

Հոդված 2

Համատեղ վերահսկիչ միջոցառումների նպատակները

Համատեղ վերահսկիչ միջոցառումների հիմնական նպատակներն են ստուգումն ու հսկողությունը՝

անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին ներմուծման մաքսատուրքերի՝ բաշխման ենթակա գումարների հաշվեգրման նկատմամբ.

անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխման ենթակա՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների ամբողջական ու ժամանակին փոխանցման նկատմամբ.

անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից՝ յուրաքանչյուր անդամ պետության համար սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվների պահպանման նկատմամբ:

Հոդված 3

Համատեղ վերահսկիչ միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը

1. Համատեղ վերահսկիչ միջոցառումներն անցկացվում են յուրաքանչյուր տարի յուրաքանչյուր անդամ պետության լիազորված մարմնում եւ բոլոր անդամ պետությունների տարածքներում պետք է ավարտվեն հաշվետու տարվան հաջորդող տարվա սեպտեմբերի 1-ից ոչ ուշ:

Անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի ներկայացուցիչների՝ համատեղ վերահսկիչ միջոցառումներ անցկացնելու նպատակով գործուղման ծախսերը կատարվում են այդ անդամ պետության բյուջեի միջոցների հաշվին:

2. Համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու համար կազմվում է համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու ծրագիր (այսուհետ՝ ծրագիր):

Հաշվետու տարվա ծրագիրը մշակվում է անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի կողմից, որը համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու տարում նախագահում է Եվրասիական տնտեսական միության մարմիններում՝ համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետի:

Ծրագրով սահմանվում են համատեղ վերահսկիչ միջոցառման առարկան, օբյեկտները, այդ միջոցառման շրջանակներում լուծվող հարցերը, օբյեկտներում դրա անցկացման ժամկետները, անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների ներկայացուցիչներից կազմված՝ վերահսկողության համատեղ խմբի կազմը (այսուհետ՝ վերահսկողության համատեղ խումբ), անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների կոլեգիաների (խորհուրդների, լիազորված անձանց) (այսուհետ՝ համատեղ կոլեգիա) համատեղ նիստի անցկացման ամսաթիվն ու վայրը:

Ծրագիրը համաձայնեցվում է անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների հետ եւ հաստատվում դրանց ղեկավարների (նրանց կողմից լիազորված անձանց) կողմից՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 1-ից ոչ ուշ:

Այն անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինները, որոնց տարածքներում անցկացվում է համատեղ վերահսկիչ միջոցառումը, իրենց պետությունների լիազորված մարմիններ են ուղարկում ծրագիրը՝ կցելով նշված միջոցառման կազմակերպման ու անցկացման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

3. Անդամ պետությունների լիազորված մարմինները վերահսկողության համատեղ խմբի անդամների համար ապահովում են աշխատանքի պատշաճ պայմաններ (ապահովում են լիազորված մարմնի տարածք մուտքի հնարավորությունը, տրամադրում են առանձին տարածք, օրգտեխնիկա, կապի ծառայություններ) եւ աջակցում են համատեղ վերահսկիչ միջոցառման անցկացման գործում:

Վերահսկողության համատեղ խմբի անդամները որոշում են այս կամ այն վերահսկիչ գործողությունների իրականացման, տեղեկատվության եւ փաստաթղթերի ստացման ձեւերի ու եղանակների, վերլուծական ընթացակարգերի անցկացման անհրաժեշտությունն ու հնարավորությունը, ինչպես նաեւ պահանջվող տեղեկությունների եւ ապացույցների հավաքումն ապահովող տվյալների ընտրանքի ծավալը:

Վերահսկողության համատեղ խմբի անդամները պարտավոր են պահպանել գտնվելու վայրի պետության օրենսդրությունը, ինչպես նաեւ վերահսկիչ միջոցառումների անցկացման՝ այդ պետությունում կիրառվող կանոններն ու ընթացակարգերը:

4. Անդամ պետությունների լիազորված մարմինները վերահսկողության համատեղ խմբի անդամներին տրամադրում են ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրմանն ու բաշխմանը, անդամ պետությունների բյուջեներ որպես եկամուտ դրանց փոխանցմանն առնչվող տեղեկատվություն եւ փաստաթղթեր:

Եթե համատեղ վերահսկիչ միջոցառման անցկացման համար անհրաժեշտ է անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմիններից եւ ազգային (կենտրոնական) բանկերից լրացուցիչ տեղեկատվություն ու փաստաթղթեր ստանալ, ապա այն անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի կողմից, որի տարածքում անցկացվում է համատեղ վերահսկիչ միջոցառումը, անդամ պետությունների այդպիսի

կենտրոնական մաքսային մարմիններ եւ ազգային (կենտրոնական) բանկեր հարցումներ են ուղարկվում համապատասխան տեղեկատվության ու փաստաթղթերի տրամադրման վերաբերյալ:

Հարցվող տեղեկատվությունն ու փաստաթղթերը կամ պարզաբանումները (հարցվող տեղեկատվությունն ու փաստաթղթերը տրամադրելու անհնարինության դեպքում) անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի հարցման մեջ նշված ժամկետներում ուղարկվում են այն անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմին, որի տարածքում անցկացվում է համատեղ վերահսկիչ միջոցառումը:

Հարցվող փաստաթղթերը տրամադրվում են թղթային կրիչով՝ պատճենների տեսքով եւ (կամ) էլեկտրոնային տեսքով:

5. Պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի շարքին դասվող տեղեկություններ պարունակող տեղեկատվության ու փաստաթղթերի՝ թղթային կրիչով եւ (կամ) էլեկտրոնային տեսքով փոխանցումն իրականացվում է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում անցկացվում է համատեղ վերահսկիչ միջոցառումը:

Նշված տեղեկությունները չեն կարող առանց այդ տեղեկությունները տրամադրած լիազորված մարմնի, կենտրոնական մաքսային մարմնի կամ ազգային (կենտրոնական) բանկի գրավոր համաձայնության օգտագործվել դրանց հարցման եւ տրամադրման նպատակներից բացի այլ նպատակներով: Այդ տեղեկությունների հրապարակման պատասխանատվությունը սահմանվում է այն պետության օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացի է տվյալ տեղեկությունները հրապարակած անձը, եւ անդամ պետությունների միջեւ հարաբերություններում կիրառվող միջազգային պայմանագրերով:

Հոդված 4

Համատեղ վերահսկիչ միջոցառման անցկացման արդյունքների ձեւակերպումը

1. Համատեղ վերահսկիչ միջոցառման անցկացման արդյունքներով կազմվում են հետեւյալ փաստաթղթերը՝

ա) անդամ պետությունների լիազորված մարմինների ստուգմանն ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքների վերաբերյալ ակտեր (այսուհետ՝ ստուգման ակտեր).

բ) անդամ պետությունների լիազորված մարմինների գրավոր առարկություններ (առկայության դեպքում).

գ) ամփոփ հաշվետվություն համատեղ վերահսկիչ միջոցառման անցկացման արդյունքների վերաբերյալ (այսուհետ՝ ամփոփ հաշվետվություն):

2. Անդամ պետության լիազորված մարմնի ստուգմանն ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառման անցկացման արդյունքները ձեւակերպվում են ստուգման ակտով:

Ստուգման ակտի ձեւը սահմանվում է անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների ղեկավարների (նրանց կողմից լիազորված անձանց) կողմից:

Ստուգման ակտը կազմվում է մեկական օրինակից՝ անդամ պետության լիազորված մարմնի համար եւ յուրաքանչյուր անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի համար, ստորագրվում է վերահսկողության համատեղ խմբի անդամների եւ անդամ պետության լիազորված մարմնի ղեկավարի (նրա կողմից լիազորված անձի) կողմից:

Այն անդամ պետության լիազորված մարմնի ղեկավարին (նրա կողմից լիազորված անձին), որի նկատմամբ անցկացվում է համատեղ վերահսկիչ միջոցառումը, ստուգման ակտի հետ ծանոթանալու համար տրվում է ստուգման ակտի օրինակը տրամադրելու օրվանից մինչեւ 3 աշխատանքային օր:

Ստուգման ակտի վերաբերյալ առարկությունների առկայության դեպքում անդամ պետության լիազորված մարմնի ղեկավարը (նրա կողմից լիազորված անձը) ստորագրում է այն՝ առարկությունների առկայության վերաբերյալ վերապահումով: Գրավոր առարկությունները, անհրաժեշտ տեղեկատվության ու փաստաթղթերի կցմամբ, ստուգման ակտի ստորագրման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են այն անդամ պետության ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմին, որի տարածքում անցկացվել է համատեղ վերահսկիչ միջոցառումը, եւ հաշվի են առնվում ամփոփ հաշվետվության պատրաստման ժամանակ:

Համատեղ վերահսկիչ միջոցառման անցկացման արդյունքներով՝ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի շարքին դասվող տեղեկություններ պարունակող փաստաթղթերի ձեւակերպումն իրականացվում է անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների կողմից՝ այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում անցկացվում է համատեղ վերահսկիչ միջոցառումը:

3. Սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության մեջ նշված՝ անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինը հաշվետու տարվան հաջորդող տարվա նոյեմբերի 1-ից ոչ ուշ համատեղ վերահսկիչ միջոցառման անցկացման արդյունքներով կազմում է ամփոփ հաշվետվության նախագիծ, որում ներառվում են ստուգման ակտերում շարադրված փաստերը, տեղեկատվության եւ փաստաթղթերի, այդ թվում՝ անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների հարցումներով ստացված տեղեկատվության եւ փաստաթղթերի վերլուծության արդյունքները եւ անդամ պետությունների լիազորված մարմինների գրավոր առարկությունների (առկայության դեպքում) ուսումնասիրությունները, եզրահանգումները եւ հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ առաջարկությունները:

Սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության մեջ նշված՝ անդամ պետության ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինը ոչ ուշ, քան համատեղ կոլեգիայի նիստի անցկացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ, Եվրասիական տնտեսական հանձնաժողով է ուղարկում այդ նիստին դրա ներկայացուցիչների մասնակցության հրավեր (նշելով քննարկման համար նախատեսվող հարցերը):

Անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինները ոչ ուշ, քան համատեղ կոլեգիայի նիստի անցկացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ, իրենց պետությունների լիազորված մարմիններ, կենտրոնական մաքսային մարմիններ, ազգային (կենտրոնական) բանկեր են ուղարկում համատեղ կոլեգիայի նիստին դրանց ներկայացուցիչների՝ յուրաքանչյուր լիազորված մարմնի, կենտրոնական մաքսային մարմնի, ազգային (կենտրոնական) բանկի իրավասության շրջանակներում մասնակցության հրավերներ (նշելով քննարկման համար նախատեսվող հարցերը):

Ամփոփ հաշվետվությունը ստորագրվում է անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների ղեկավարների (նրանց կողմից լիազորված անձանց) կողմից համատեղ կոլեգիայի նիստում:

Համատեղ կոլեգիայի նիստն անցկացվում է սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության մեջ նշված՝ անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի կողմից հաշվետու տարվան հաջորդող տարվա դեկտեմբերի 31-ից ոչ ուշ:

Անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների որոշմամբ՝ համատեղ կոլեգիայի նիստը կարող է անցկացվել տեսահամաժողովի ռեժիմով՝ ստորագրվող ամփոփիչ փաստաթղթերի հետագա փոխանակմամբ:

4. Ամփոփ հաշվետվությունը դրա ստորագրման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում՝

ա) անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների կողմից ուղարկվում է իրենց պետությունների կառավարություններ.

բ) սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության մեջ նշված՝ անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի կողմից ուղարկվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

5. Համատեղ կոլեգիայի որոշմամբ ամփոփ հաշվետվության՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում հրապարակման ենթակա մասը անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների կողմից տեղադրվում է իրենց պաշտոնական կայքերում եւ ուղարկվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակելու համար:

Հոդված 5

Հայտնաբերված խախտումների վերացման եւ առաջարկությունների իրագործման մեխանիզմը

1. Անդամ պետության կառավարությունն ամփոփ հաշվետվությունն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում այն ուղարկում է իր պետության՝ ամփոփ հաշվետվության մեջ նշված պետական մարմիններ՝ կատարման համար:

Անդամ պետության պետական մարմինները պարտավոր են վերացնել հայտնաբերված խախտումները, միջոցներ ձեռնարկել ամփոփ հաշվետվության մեջ նշված առաջարկությունների իրագործումն ապահովելու համար եւ դրա մասին տեղեկացնել իրենց պետության կառավարությանը եւ պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնին՝ ամփոփ հաշվետվության մեջ սահմանված ժամկետներին համապատասխան:

Անդամ պետությունների բյուջեներում բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարներն անդամ պետության բյուջե հաշվեգրելու ժամանակ խախտումների վերացումն իրականացվում է այդ պետության օրենսդրությանը համապատասխան:

Անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինն իր պետության պետական մարմինների կողմից տեղեկատվությունն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում մյուս անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմիններին եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնում է հայտնաբերված խախտումների վերացման եւ առաջարկությունների իրագործման արդյունքների մասին:

2. Ամփոփ հաշվետվության մեջ նշված խախտումների վերացման եւ առաջարկությունների իրագործման վերաբերյալ տեղեկատվությունն արտացոլվում է հաջորդ հաշվետու տարվա ամփոփ հաշվետվության մեջ:

Հոդված 6

Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով:

2. Անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ուժի մեջ մտնող առանձին արձանագրություններով:

3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարված լինելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

4. Սույն Համաձայնագիրը Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է եւ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս է կազմում:

Կատարված է _____ քաղաքում, 201___ թվականի _____-ի «____» -ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝	**Բելառուսի Հանրապետության կողմից՝**	**Ղազախստանի Հանրապետության կողմից՝**	**Ղրղզստանի Հանրապետության կողմից՝**	**Ռուսաստանի Դաշնության կողմից՝**

ՏԵՂԵԿԱՆՔ

Ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման և բաշխման կարգի նկատմամբ համատեղ վերահսկողական միջոցառումների իրականացման և այդ միջոցների ԵԱՏՄ անդամ երկրների բյուջեների եկամտային մաս փոխանցելու վերաբերյալ համաձայնագրի ստորագրման նպատակահարմարության

«Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրով կանոնակարգվում է անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարնիների կողմից «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 26-րդ հոդվածով սահմանված Պայմանագրի 5-րդ հավելվածով նախատեսված համատեղ վերահսկիչ (հաշվեքննիչ) միջոցառումների իրականացման նպատակները, դրանց կազմակերպման և անցկացման սկզբունքները ու նորմերը:

Համաձայնագրի նախագիծը անցել է ԵԱՏՄ անդամ պետությունների շահագրգիռ մարմինների համաձայնեցման փուլը և հավանության է արժանացել 2018թ. սեպտեմբերի 14-ին Մոսկվայում կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի նիստում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման և բաշխման կարգի նկատմամբ համատեղ վերահսկողական միջոցառումների իրականացման և այդ միջոցների ԵԱՏՄ անդամ երկրների բյուջեների եկամտային մաս փոխանցելու» համաձայնագրի նախագծի վերաբերյալ շահագրգիռ մարմինների առաջարկությունների

հ/հ	Առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	1	2	3	4
1	ՀՀ արտաքին գործերի նախարարություն 2019-01-31, 1111/00688	Համաձայնագրի ստորագրումը համապատասխանում է ՀՀ վարած արտաքին քաղաքականությանը, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին և նպատակահարմար է համարում համաձայնագրի ստորագրումը:		
2	ՀՀ ֆինանսների նախարարություն 2019-01-25, 04/5-3/967-19	Համաձայնագրի նախագծում Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող, եկամուտները նվազեցման կամ ավելացման հանգեցնող դրույթներ առկա չեն		
3	ՀՀ արդարադատության նախարարություն 2019-01-30, 01/14/1634-19	Համաձայնագրի նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկա:Նախագիծը ենթակա է վավերացման:		
4	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն 2018-02-08, 01/15.4/757-19	Համաձայնագրի նախագծում Հայաստանի Հանրապետության համար գույքային պարտավորություններ նախատեսող դրույթներ առկա չեն:		
5	ՀՀ պետական եկամուտների կոմիտե 2018-01-30, 01/5-2/5847-19	Համաձայնագրի նախագծի վերաբերյալ դիտողություններ չկա:		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

1111/00688

31.01.2019թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Յոլյան,

Ի պատասխան 16.01.2019թ. թիվ ՀՊԵ-08 գրության, կից ներկայացնում ենք ՀՀ արտաքին գործերի նախարարության եզրակացությունը՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերով համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրի ստորագրման արտաքին քաղաքական նպատակահարմարության և Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականությանը և ստանձնած միջազգային պարտավորություններին դրա համապատասխանության մասին:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ**

ՄՏԻՊ № ԴՄՊ-112
«01» 02 2019թ.
ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՊԵՏԱՐԱՆ

Կատ.՝ Միջազգային պայմանագրերի և իրավունքի վարչություն
Հեռախոս՝ 060-620-420

Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն #2, Երևան 0010, Հեռ.՝ +374 60 620000, Ֆաքս՝ + 374 60 620062
Government House #2, Vazgen Sargsyan 3, Yerevan 0010, Tel: +374 60 620000, Fax: + 374 60 620062, E-mail: info@mfa.am www.mfa.am

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԱԾ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Վերոհիշյալ համաձայնագրի նախագիծը հավանության է արժանացել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2018թ. սեպտեմբերի 14-ին Մոսկվայում կայացած նիստի ժամանակ:

Այն սահմանում է ԵԱՏՄ անդամ պետության ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի կողմից իրականացվող համատեղ վերահսկիչ միջոցառումների, դրանց իրականացման կարգի և արդյունքների ձևակերպման, հայտնաբերված խախտումների վերացման մեխանիզմների և ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի առաջարկությունների իրականացման նպատակներն ու օբյեկտները: Բացի այդ համաձայնագրի նախագծով կանոնակարգվում է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 26-րդ հոդվածով սահմանված 5-րդ հավելվածով նախատեսված համատեղ վերահսկիչ (հաշվեքննիչ) միջոցառումների իրականացման նպատակները, դրանց կազմակերպման և անցկացման սկզբունքները և նորմերը:

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ հավելվածի 53-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատը, Բելառուսի Հանրապետության պետական հսկողության կոմիտեն, Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեն, Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատը համատեղ

հսկողական միջոցառումների շրջանակներում յուրաքանչյուր տարի ստուգում են անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից պայմանագրի 5-րդ հավելվածի դրույթների կատարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերով համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրի ստորագրումը համապատասխանում է ՀՀ վարած արտաքին քաղաքականությանը, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի հիմքով նպատակահարմար է համարում համաձայնագրի ստորագրումը:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 055, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

04/5-3/967-19 2019-01-25

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ի պատասխան ՀՀ հաշվեքննիչ պալատի
ս.թ. հունվարի 16-ի թիվ ՀՊԵ-09 գրության

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ կից տրամադրում ենք «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրի նախագծի վերաբերյալ եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄՏԻՑ No 4ՊՊ-34
«29» 01 2019թ

Կատարող՝ Արմենուհի Մովսեսյան
Միջազգային համագործակցության վարչություն
Հեռ.՝ 011 800 322

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 055, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրի նախագծի Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին, այդ թվում՝ նախագծով ծախսերի ավելացման հանգեցնող դրույթների և տվյալ տարվա համար Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդունած «Պետական բյուջեի մասին» օրենքում չներառված պարտավորությունների մասին

«Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրի նախագծում Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող, եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման հանգեցնող դրույթներ առկա չեն:

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Արմենուհի Մովսեսյան
Միջազգային համագործակցության վարչություն
Հեռ.՝ 011 800 322

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010 Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ. 594-004
էլ. փոստ info@moj.am

N 01/14/1634-19

«30» 01 2019թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Յոլյան

Ի պատասխան Ձեր 2019թ. հունվարի 16-ի թիվ ՀՊԵ-07 գրության՝ հայտնում ենք, որ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրի նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Միաժամանակ Ձեզ ենք ներկայացնում վերոնշյալ նախագծում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմերի, ինչպես նաև նախագիծը վավերացման ենթակա դարձնող հիմքերի առկայության մասին ՀՀ արդարադատության նախարարության եզրակացությունը:

Առդիր՝ 1 էլ. ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ**

30.01.2019

X

Artak Zeynalyan

ՀՀ ԱՆ միջազգային իրավական համագործակցության վարչություն
Հեռ. (010) 594-176

ՄՄՊ-110
31 01 19թ.
ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱԿԱՍՈՂ, ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՈՂ ՆՈՐՄԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՐՁՆՈՂ ՀԻՄՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Համաձայնագրի նախագիծը չի պարունակում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմեր:

Միաժամանակ գտնում ենք, որ Համաձայնագրի նախագիծը ներկայիս խմբագրությամբ ենթակա է վավերացման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 11/15.4/7857-19
«08» 02 2019 թ

Ձեր №

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Յոլյան,

Ի պատասխան Ձեր 2019 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՊԵ-06 գրության՝ հայտնում ենք, որ «Ներմուծման մաքսատուրքի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվագրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» Համաձայնագրի նախագծի վերաբերյալ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունն իր իրավասության շրջանակներում առաջարկություններ և դիտողություններ չունի:

Միաժամանակ, «Միջազգային պայմանագրերի մասին» 2018 թվականի մարտի 23-ի թիվ ՀՕ-213-Ն ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կից ներկայացնում ենք ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵԱՏՄ և արտաքին առևտրի վարչություն
011 597213

ՄՏԴՏ № Հ-168
«11» 02 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

0010, ք.Երևան, Տիգրան Մեծի պող.4
Հեռ. 011521877, ֆաքս 011529753
Էլ. փոստ. info@spm.am
Կայք. www.spm.am

Ձեր № 15.4/[185657]-19
21.01.2019թ.

**ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Կարապետյան

Ի պատասխան Ձեր գրության՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվագրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) մասին համապատասխան եզրակացություն ներկայացնելու վեաբերյալ հայտնում եմ, որ նախագծում «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի կարգավորման տեսանկյունից Հայաստանի Հանրապետության համար գույքային պարտավորություններ նախատեսող դրույթների առկա չեն:

Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ. «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Շահագրգիռ մարմին(ներ)ը տրամադրում է(են) եզրակացություն միջազգային պայմանագրի նախագծի կամ բազմակողմ միջազգային պայմանագրի՝ օրենքով իրենց վերապահված գործունեության ոլորտին առնչվող հարցերի մասին»:

Առաջնորդվելով վերը նշված իրավական նորմի պահանջներով՝ հայտնում եմ, որ նախագծով նախատեսված իրավահարաբերությունների կարգավորումը չի առնչվում

Կատարող՝ Արկադի Պետրոսյան
Հեռ. 011 52 97 53

պետական գույքի կառավարման և մասնավորեցման ոլորտներին, ինչպես նաև «Պետական գույքի կառավարման մասին» և «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքներով սահմանված Պետական գույքի կառավարման կոմիտեին վերապահված իրավասություններին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԻ ՕԲՈՍՅԱՆ

Invalid signature

X

VERIFIED OCSP 1/31/2019 15:35:44 GMT+4

Signed by: OBOSYAN ANI 5801780084

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«30» 01 2019թ.
No 01/5-2/5847-19

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆԻՆ

Ի պատասխան ՀՀ հաշվեքննիչ պալատի
ս.թ. հունվարի 16-ի թիվ ՀՊԵ-05 գրության

Հարգելի պարոն Յոլյան

Հայտնում ենք, որ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրի նախագծի վերաբերյալ դիտողություններ չկան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

1/30/2019

X

VERIFIED OCSP 1/30/2019 20:01:58 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

ՄՏՏ No Հրտ-116
«01» 02 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Կատ.՝ Ծովինար Մեհրաբյան
Միջազգային համագործակցության վարչություն
Հեռ. 060544342